

ՍԵԼՃՈՒՔԵԱՆ ԹՈՒՐՔԵՐՈՒ
ԱՐՇԱՒԱՆՔԸ

(*Смр. Рук. 1950. № 5-6, т. 131*)

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐԶ ՍԵՐԱՍՏԻՈՅ ՄԷՋ

Ինչպէս տեսնուեցաւ (69), Պետրոս Գե-
տադարձ կաթողիկոսը տակաւին Վոսիորի
ափերուն վրայ էր, երբ Գթլմուշի եւ Իբ-
րահիմ Ինալի հրոսախումբերը խուժեւր էին
հայկական հողի վրայ: Անշուշտ նա լսեւ
էր բեւզանդական արքունիքի չըջանալնե-
րէն, թէ ինչպիսի՞ զարհուրելի դադանու-
թիւններ կատարեւր էին Թուրքերը հայ ան-
մեղ ժողովուրդին վրայ, ինչպիսի՞ վայ-
րադութեամբ քարուքանդ ըրեր էին անոր
չէն եւ բարգաւաճ քաղաքներն ու աւան-
ները: Լսած ըլլալու էր այս բոլորը եւ
խիղճը զարկած: Եւ իրօք, Անին երեք ան-
գամ Յոյներուն ծախողը, եւ իր ձեռքով
Անիի բանալիները Յոյներուն յանձնողը,
Հայոց ազգին հասած չարիքներուն զլխա-
ւոր պատասխանատուն էր, աջ բազուկը
հանդիսանալով Մոնոմարոս կայսեր:

Հակառակ ասոր, Ատոմ Արծրունին, թագաւոր Սեբաստիոյ, չէր կրնար հանդուրժել որ հայ հոգեւորականութեան բարձրագոյն պետը արգելափակուի օտար հողի վրայ, թէեւ արտաքսապէս պատուաւոր վիճակի մէջ: Ատոմ նոյնքան աստուածավախ եւ բարեպաշտ, ինչպէս էր իր հայրը Սենեքերիմ — Յովհաննէս, վճռեց Հայոց կաթողիկոսը իր արդելանոցէն ազատել: Պայմանները նպաստաւոր էին: Այդ ժամանակ, նա լաւ յարաբերութեան

մէջ էր բերդանդական արքունիքին հետ, ուստի, Մոնոմախոսէն խնդրեց՝ որ վերջ տրուի Պետրոսի պատուաւոր արգելափակման, եւ հրաման արձակուի որ Հայաստան վերադառնայ: Սակայն, կայսրը միշտ կասկածոտ հայրապետին հաւատարմութեան վրայ, չարտօնեց անոր մուտքը Հայաստան աշխարհը, բայց, չուղելով նաեւ հայ թաղաւորին սիրտը կոտրել, հրաման տուաւ որ հայրապետը Սերաստիա դառնայ: Ասոր համար ալ պէտք եղաւ նորէն Պետրոսի սիրտը տաքացնելու, հոն յունական շահերու զգացումը վերաբարձարձելու համար: «Թաղաւորը եւ պատրիարքը (70), կ'ըսէ Ուսհայեցին, շնորհէին Պետրոսի բազում ընծայս՝ գանձս եւ դիպակս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ ազգի ազգի զարդարանս հանդերձ մեծամեծ տրոօք »: Եւ դեռ աւելին, կայսրը «իշխանութիւնս տայր ազատաց նորա» (71), որ է՝ Պետրոսի քով գտնուող աղնուականներուն, եւ գփուրդդին իւր գտէր Անանի արար Սինգելոս» (72), ինչ որ Յոյներու քով պատուի անուն մըն էր, զոր կ'ընծայէին անոր՝ որ պատրիարքին աջակից կը գտնուէր եւ սահմանուած էր անոր յաջորդելու:

Սարուած աշաղիսի պատիւներով եւ զգուած աշխատի փաղաքշանքներով՝ Հայոց հայրապետը, 1051 թուին, զրկուեցաւ Սեբաստիա, ուր պիտի ապրէր Ատոմի «պաշտպանութեան եւ երաշխաւորութեան ներքեւ» (73) : Արծրունի թագաւորը՝ Պետրոսի հաստատունն քնակալայր որոշեց Սեբաստիոյ Սուրբ Նշան վանքը, իր հօրը ձեռակերտը, զոր ինքը դեռ աւելի զեղեցիկացուցեր ու զարգարեր էր :

Պետրոսի պատուաւոր արդեւափաւման
ազատումը՝ իբր յազթանակ մը նկատեց՝
անոր վրայ հիացող եւ անոր մտերիմ բա-

(70) Այդ ժամանակ դեռ արտաքին

(70) Այդ ժամանակ ղեռ պատրիարք էր Միքայել Կեղուկաբեկ, Մոնոմախոս կայսեր մտերիմը:

(71) $\Pi_{L, N} \zeta_{w, j k y h}, \quad w h y, \quad t \geq 125:$
 (72) $\Pi_{L, N} \zeta_{w, j k y h}, \quad w h y, \quad t \geq 125:$

(72) Ուսումնական, «Մանկութեան», էջ 556:

(73) Լաստիվերացի, ՂԼ. ԺԴ. էջ 60:

բեկամբ Գրիգոր Մազեաւորոս Պաշլաւու-
նին, որ իբր սիրոյ գրաւական, անոր ըն-
ծայ զրկեց, ինչպէս կ'ըսէ ինքը, խաչանիշ
«ցուպ մեցուկ եւ գաւազան մական, եւ
բաժակ մանուածոյ ֆախարակեալ, եւ ա-
նօթ իւղոյն սրբոյ» (74) :

Պետրոս Սեբաստիոյ մէջ ապրեցաւ եօթը տարի «մեծաւ փառաւորութեամբ» (75) . բայց երկինքը զթալով անոր վրայ, թոյլ չտուաւ որ նա աղանջաւոր ըլլայ Հայաստանի վրայ դալիք մեծամեծ չարիքներուն : Նա մեռաւ շուրջ 1058-ին . անոր կաթողիկոսութիւնը տեւեր էր 40 տարի, սկսած փառքով եւ մորկայոյց կեանքով մը վեր-
ջացած :

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՔ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍ-
ՏՐՈՍ

Մինչ Պետրոս Գետադարձը Սեբաստիա
կը փոխադրուէր, նորէն սկսեր էին գլուխ
բարձրացնել Թոնդրակեցի ազանդաւորնե-
րը, զորս Ժամանակակից Լաստիվերտցին
ըր, զորս Ժամանակակից Լաստիվերտցին
կ'անուանէ « մարդադէմ գազաններ » եւ
« կամարար սատանայի » (76) : Ասոնք մոռ-
նալով Սարգիս կաթողիկոսին իրենց դէմ
յարուցած հալածանքները, սկսեր էին
կեղծ ու պատիւ Ժեւերով բարեպաշտ հա-
ւատացեալները իրենց կողմը որսալ, թու-
նաւորելով անոնց լոյս հաւատքը : Այս
չըջանին, անոնց գլուխը կանգնած էր ա-
զանդադետը Ղազար, զոր Մադիստրոս կը
կոչէ Շէկ-Շուկ (77) :

Այս անգամ աղանդաւորներուն դէմ
ախոյեան կանգնեցաւ Գրիգոր Մագիստ-
րոս Պաճլաւունին, Վասպուրականի,
Տարօնի, Մանազկերտի, Արճէշի, Բերկրիի
եւ Միջագետքի զուբսը, որ ոչ միայն հը-
մուտ ցիտնական մըն էր, այլ եւ ուղղա-

Վառ կրօնքի նախանձախնդիր պաշտպան մը, աստուածաբանական եւ փիլիսոփայական հմտութեամբ օժտուած :

Մագիստրոսի հաւատաքննութեան դըր-
դապատճառն եղան երկու քահանաներ,
Պողիկարպոս և Նիկանովը, որոնք զՂԵՄԷ
դալով՝ անոր քով եկան եւ խոստովանե-
ցան թոնդրակի մէջ գործուած շահատա-
կութիւնները: Հայազգի դուքսը, որուն
իշխանութեան ներքեւ կը գտնուէր թոն-
դրակը, «եւ զոր ինքը «Շնալանք» կ'ան-
ուանէ, եւ ուր «բնակեալ էին արք հան-
դերձիւք կրօնաւորաց, եւ կանանց բազ-
մութեան բոգից», կը հրամայէ, մօտաւո-
րապէս 1052 թուին, «տապալել զհիմունս
յարկացն եւ հրձիգ առնել, եւ զինքեան
հանել ի սահմանաց իւրոց»: Միջազեւորի
դուքսը ձեռք կ'անցընէ նաեւ «գրուղթսն առ
անօրէն առաջնորդն Յետու, եկեալ յիւրա-
մանչիւր գաւառաց», որոնք լի էին «չա-
րաչար կախարդութեամբ եւ հայհոյու-
թեամբ» (78):

Մեծանճն հայ հաւատաքննիչը՝ աղան-
դաւորներուն վրայ իր իշխանութիւնը կը
գործածէր՝ առանց մարմնական չարչա-
րանքներու։ Նա ինքնին կ'ըսէ. «Ոչ զոք վը-
նասեցաք մարմնական պատուհասիւք» (79)
այլ զղջումի յորդորելով։ Այս ոճով նա
յաջողեցաւ հազար մարդ զղջումի բերել,
ունենալով իբր գործակից քանի մը եպիս-
կոպոսներ, որոնց գլուխն էր Եփրեմ¹ Բջնի
պատկախաւորութեամբ, իր մտերիմը։

Բնական էր որ այդ գապիչ ուժին առջև
աղանդաւորները ցնցուէին: Եւ արդարեւ,
աղանդապետը Ղազար, իր գլխաւոր հա-
մախօհներով՝ ապաւիններ էին Ամիդ քա-
ղաքը, խնդրելով Ասորիներու Պետրոս պա-
տրիարքին պաշտպանութիւնը: Անոնք
դանդաղ յայտներ էին այն կարծեցեալ

(77) Մազիստրոսի «Թուղթերը», էջ 166:

(77) Մարգարտորոսի
(78) Սեպ. էջ 162:

(78) $U_5\eta$, 52, 162.
(79) $U_5\eta$, 52, 162.

(79) U_{eq} , 52 162:

(74) Գ. Մարխարովի «Թուղթերը», էջ 31-32:

(74) Գ. Մաղիսարոսի «Թուղթ»
(75) Ս. Նալբանդյան, ԵՊ 125:

(75) Ուսնայեցի, անդ, էջ 125:
(76) Լաստիվերացի, գլ. իթ. էջ 100:

(76) *Լաստիվերացի, ԳԼ. ՌԻ. 32*

(16) $L^{\infty}(\mathbb{R}^n) \rightarrow L^{\infty}(\mathbb{R}^n)$

ԲԱԶՄԱՎԷՊ



